Հայ-իտալական խորհրդաբանակաները Ս. Էջմիածնում

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 14-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայ-իտալական խորհրդարանական բարեկամության խմբին:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն ուրախությամբ արձանագրեց, որ Հայաստանի եւ Իտալիայի իշխանությունների միջեւ հարաբերությունները գնալով ավելի են զարգանում՝ համահունչ դարերի ընթացքում երկու երկրների միջեւ եղած բարեկամությանը: Անդրադառնալով Հայ Առաքելական եւ Հռոմի Կաթոլիկ եկեղեցիների հարաբերություններին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ դրանք բարձր մակարդակի վրա են եւ աչքի են ընկնում առանձնակի ջերմությամբ: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ երկու Եկեղեցիների եղբայրական հարաբերություններն արտահայտվում են ինչպես հովվապետերի, այնպես էլ բարձրաստիճան հոգեւորականների փոխայցելություններով: Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց նաեւ, որ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու աջակցությամբ Հայ Եկեղեցու մի շարք սպասավորներ իրենց կրթությունն են շարունակում Եւրոպայի եւ Ամերիկայի բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ մասնագիտանալով աստվածաբանական զանազան գիտությունների մեջ:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ հայ ժողովրդի հոգեւոր, մշակութային կյանքում, ինչպես նաեւ ազգային ինքնության պահպանման գործում Հայ Եկեղեցու կարեւոր դերակատարության մասին, անդրադարձ կատարվեց Հռոմի եւ Միլանի հայկական համայնքների վիճակին, եկեղեցի-պետություն հարաբերություններին եւ Հայ Եկեղեցու միջեկեղեցական ու միջկրոնական կապերին:

* * *

Հոկտեմբերի 14-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռիգայի (Լատվիայի Հանրապետություն) քաղաքապետ Նիլ Ուշակովին՝ ուղեկցությամբ Լատվիայի Հանրապետության պատվավոր հյուպատոս Արմեն Ղասաբօղլյանի:

Ողջունելով քաղաքապետի այցը Մայր Աթոռ՝ Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց Երեւանի եւ Ռիգայի միջեւ առկա փոխգործակցությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց նման այցելությունների կարեւորությունը՝ նշելով, որ դրանք նպաստում են փոխճանաչողության եւ փոխհասկացողության ոգու զորացմանը: Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ երկու երկրների իշխանությունները շարունակում են պահպանել ու զարգացնել տասնամյակներ առաջ ձեւավորված համագործակցության բարի ավանդույթները:

Խոսելով Լատվիայի հայկական համայնքի մասին՝ Վեհափառ Հայրապետն ի դեմս քաղաքապետ Նիլ Ուշակովի իր գնահատանքը հայտնեց Լատվիայի իշխանություններին՝ հայ ժողովրդի զավակներին ցուցաբերվող աջակցության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ